

ԵՐԲ ԵՎ ՈՐՏԵՂ Է ԳՐՎԵԼ «ԱՐՇԱԿ Բ» ՕՊԵՐԱՆ

ՍԱՄՎԵԼ ԽՅԱՆԴԱՐՅԱՆ

Հայ երաժշտագիտության և բանասիրության մեջ վաղուց ի վեր գերիշխում է այն տեսակետը, որ Տիգրան Չուխաճյանն իր «Արշակ Բ» օպերան ստեղծել է 1868 թ., Կոստանդնուպոլսում: Կոմպոզիտորին նվիրված ինչպես հին, այնպես էլ նորագույն աշխատություններում՝ Գ. Տիգրանովի, Ալ. Շահվերգյանի, Մ. Մուրադյանի, Ն. Թահմիզյանի, Հ. Փափազյանի և այլոց գրքերում ու հոդվածներում, հենց այդ թվականն է նշվում իբրև մեր երաժշտական թատրոնի հիմնադրման տարեթիվը՝ «Հայկական սովետական հանրագիտարանում» և սսվում է, որ Տ. Չուխաճյանի անդրանիկ մեծակտավ ստեղծագործությունն ավարտվել է 1868-ին, Կ. Պոլսում, ըստ Թ. Թերզյանի երկվեզվյան (հայերեն և իտալերեն) լիբրետոյի...»¹: Այսուհանդերձ նկատելի է, որ ուսումնասիրողները Տ. Չուխաճյանի այս օպերայի ստեղծագործական պատմությանն անդրադառնալիս մի տեսակ խոսափում են «գրվել է» բայից և դիմում ուրիշ բառերի ու արտահայտությունների՝ «ստեղծվել է», «ծայնագրվել է», «բեմադրվել է», «ավարտվել է» և այլն: Այս հանգամանքը, ինչպես իրավացիորեն նկատում է բանասեր-արվեստաբան Գառնիկ Ստեփանյանը, «գուռ է բաց թողնում այն հարցի համար, թե հնարավոր է, որ սկսած լինեի ավելի առաջ. բայց թե ե՞րբ, այս հարցին չեն անդրադարձել հարգելի երաժշտագետները»²: Եվ, այսպիսով, ուժի մեջ է մնում ավանդական 1868 թվականը:

Արևմտահայության հասարակական-քաղաքական կյանքի ծանր պայմանները, թուրքական դրակոնյան գրաքննության խստությունն ու դաժանությունը և մի շարք այլ պատճառներ վկայակոչելով՝ ինքը՝ Գ. Ստեփանյանը, այդ թվականը շատ աննպաստ տարի է համարում «Արշակ Բ»-ի նման հայրենասիրական օպերայի ստեղծման համար և առաջադրում նոր տեսակետ: «Կան փաստեր,— ասում է նա,— որ Չուխաճյանը օպերան գրել է ոչ թե 1868 թ., Կոստանդնուպոլսում, այլ 1863 թ. Միլանում, խանդավառվելով մի կողմից իտալական ազատագրական պայքարի գաղափարներով, Վերդիի ազատատենչ ստեղծագործություններով, մյուս կողմից՝ Զեյթունի փառապանծ ապստամբությունը, որը մի պահ ամբողջ աշխարհի մամուլը զբաղեցրել էր իրենով, հայերի ոգևորությունն ու խանդավառությունը հասցնելով գերադրական աստիճանի»³:

Հայտնի է, որ Տ. Չուխաճյանը 1861—1864 թթ. ապրել է Միլանում, ուսանել տեղի կոնսերվատորիայում՝ աշակերտելով իտալացի աշխարհահռչակ կոմպոզիտորներին: Նա, անկասկած, խանդավառվել է և՛ իտալական ազատագրական պայքարի գաղափարներով, և՛ Վերդիի ստեղծագործություններով, և՛ Զեյթունի փառահեղ հերոսամարտով, բայց ի՞նչ փաստեր են վկայում, որ հենց Միլանում և 1863 թվականին է Տ. Չուխաճյանը գրել իր անդրանիկ «Արշակ Բ» օպերան: Հասկանալի է, որ իր նոր կարծիքը հիմնավորելու համար Գ. Ստեփանյանը նախ և առաջ պետք է մերժեր 1868 թվականը հայ օպերայի սկիզբ համարողների փաստարկումները, փորձեր դրանց ամբողջությունը և մի կողմ նետեր «հնացած» պատկերացումները: Այս առթիվ նա քննում է որոշ աղբյուրներ, որոնցից ամենազորեղը 1926 թ. Թեոդիկի «Ամենուրեք տարեցույցում» Ն. Ալիքսանյանի տպագրած մի հոդվածն է, որին էլ ամենից շատ են հետևել

¹ «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 2, Երևան, 1976, էջ 105:

² Գ. Ստեփանյան, Հոգվածներ և հուշեր, Երևան, 1985, էջ 169:

³ Նույն տեղում, էջ 169—170:

ուսումնասիրողները: Բայց որովհետև Ալիքսանյանը, ինչպես ինքն է խոստովանում հողավածի սկզբում գրված բացատրության մեջ, նյութեր է քաղել «Քեսեճյանի և այլոց թղթակցութեամբ», ապա, ըստ Գ. Ստեփանյանի, գերադասելի է հենվել ոչ թե միջանկյալ աղբյուրի, այլ հենց Ս. Քեսեճյանի ձեռագիր հուշերի վրա, որոնք պահվում են Ս. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում: «Քեսեճյանը բավական հավաստի աղբյուր կարող է լինել,— նկատում է Գ. Ստեփանյանը,— քանի որ նա Չուխաճյանի կյանքի վերջին տարիներին ո՞չ միայն եղել է նրա խմբում, այլև համագործակցել է նրան որպես իմպրեսարիո: Անշուշտ անձամբ կոմպոզիտորից լսած պիտի լիներ նրա առաջին տարիների գործունեության մանրամասնությունները»⁴:

Քեսեճյանի հուշերն անտիպ չեն. դրանք զետեղվել են Ն. Պեշկեթալյանի «Թատերական դեմքեր» աշխատության մեջ (Անթիլիաս, 1969): Հիմա տեսնենք, թե ինչ է պատմում այդ իմպրեսարիոն և որքանով են հավաստի նրա հաղորդած տեղեկությունները: «Տիգրան Չուխաճյանի առաջին գործը եղավ թ. Թերզյանի «Արշակ Բ»-ն,— գրում է Քեսեճյանը:— Երբ Պոլիս վերագործավ՝ այդ օպերան իր հետ բերած էր: Հանրածանոթ լուսանկարիչ Գևորգ Ապտուլյան վերոհիշյալ ողբերգությունը իտալերեն թարգմանել տալով՝ դրկած էր Տիգրան Չուխաճյանի, Միլանո: Երբ Տիգրան Պոլիս եկավ, «Արշակ Բ»-ի միայն նախերգանքը չէր պատրաստած»⁵ (ընդգծումը Գ. Ստեփանյանինն է—Ս. Ի.): Այնուհետև մանրամասնորեն, գեղարվեստական պատկերներ ստեղծելով, Քեսեճյանը պատմում է, թե ինչպես իր տան սենյակներից մեկում կոմպոզիտորին «բանտարկելով» Գ. Ապտուլյանը նրան ստիպում է գրել նաև օպերայի պակասող նախերգանքը:

Այժմ Ս. Քեսեճյանի ասածը համեմատենք Ն. Ալիքսանյանի վկայության հետ, որը մեջ ենք բերում ամբողջությամբ. «Իր անդրանիկ կարևոր եկել եղած է, 1868-ին, Երաժշտությունը Թ. Թերզյանի հորինած «Արշակ Բ»-ի զոր իտալերենն քարգմանած է Ս. Հեֆիմյան՝ Գ. Ապտուլյանի հրավերով՝ հայ թագավորի անունն առ ահի գրաքննության վերածելով Օլիմբիայի»⁶ (այս և հետագա բնդգծումները մերն են—Ս. Ի.): Եվ ապա. «Հետաքրքրական է հիշել թե Տ. Չ. հակառակ սովորաբար պատահածին՝ անոր նախերգանքը ձայնագրած է ի սկզբրան, երբ մյուս մասերը չկային դեռ, և ազատ ձևով նվագել տված է զայն Պալյան Սարգիս պեյի բնակարանը»⁷: Ի՞նչ է ստացվում հայտարարում: Քեսեճյանի ասելով՝ Գ. Ապտուլյանը Թովմաս Թերզյանի «Արշակ Բ» ողբերգությունը, չայերենից իտալերեն թարգմանել տալով, ուղարկել է Միլան, որտեղ Չուխաճյանը գրել է օպերան և վերադարձին իր հետ բերել Պոլիս. միայն նախերգանքն էր պակասում, մինչդեռ, ըստ Ալիքսանյանի, Թերզյանի ստեղծագործությունն իտալերենից է թարգմանվել հայերեն, և Չուխաճյանը Միլանից բերել է միայն նախերգանքը՝ Կ. Պոլսում գրելով օպերայի երաժշտությունը:

Արդ. նախապես ո՞ր լեզվով է գրվել Թերզյանի լիբրետոն: Դրամատուրգը, կարծես, գուշակում էր, որ հետագայում փաստերը շփոթվելու են, և 1871 թ. Կ. Պոլսում հրատարակած իր «Արշակ Բ» երկլեզվյան գրվածքին կցել է մի փոքրիկ առաջաբան, որտեղ պարզ և որոշակի ասում է. «Խաղը բուն իսկ իտալերենն գրած ըլլալովս բավական դժվարավ եղած են քարգմանության այն տեղվանքն ուր հարկ էր՝ երգին համար՝ իտալերեն օտանավորը նույնաչափ ի հայ փոխել... Եթե այսչափ դժվարությունս մասամբ հաղթել կրցա՝ մեծ. Հեթիմյան Սրապիոն էֆենտիին շնորհիվն է...»⁸: Ուրեմն՝ Թերզյանի լիբրետոն սկզբում իտալերեն է գրվել, հետո միայն թարգմանվել հայերեն, իսկ Քեսեճյանը պնդում է, թե հակառակն է եղել: Գ. Ստեփանյանին հայտնի է, անշուշտ, թե հե-

⁴ Նույն տեղում, էջ 170:

⁵ Նույն տեղում, էջ 171:

⁶ Թ ե ո ղ ի կ, Ամենուն տարեցույցը, Վենետիկ, 1926, էջ 454:

⁷ Նույն տեղում, էջ 454—455:

⁸ Թ ո վ մ ա թ եր ղ յ ա ն, Արշակ Բ, Կ. Պոլիս, 1871, Ազգ:

վինակը նախապես ինչ լեզվով է գրել իր «Արշակ Բ» պատմական ողբերգությունը, այլապես իր աշխատություններից մեկում չէր նշի, որ «նախ գրել է իտալերեն, հետո թարգմանել հայերեն»⁹: Եվ որքան էլ պարագրեսալ է, առաջին անգամ նրա «Արշակ Բ» օպերայի ստեղծագործական պատմության մի քանի հարցեր»¹⁰ հոդվածում ևս, որտեղ 1863 թվականն է համարվում հայ օպերայի սկիզբը, շեշտվում է, որ «Արշակ Բ»-ի լիբրետոն գրվել էր նախ իտալերեն»¹¹: Թատերագետը, չգիտես ինչու, մոռանում է իր իսկ ասածը և անվերապահորեն հավատում Քեսեճյանի տեղեկություններին:

Վերադառնանք մեր բուն հարցադրմանը: Իսկ ե՞րբ և որտե՞ղ է գրվել Թերզյանի լիբրետոն: Սկզբից ասենք, որ այս հարցում էլ կարծիքները բաժանվում են, և շատ բան դեռ անորոշ է: Այսպես, անցյալում տարածված էր այն թյուր կարծիքը, թե Թովմաս Թերզյանն իր «Արշակ Բ» քնարական ողբերգությունը գրել է 1869 թ. Փարիզում եղած ժամանակ և ձոնել է իտալացի մեծ կոմպոզիտոր Ռոսինին, որի շերմ բարեկամությունն էր վայելում ինքը¹²: Գրականագետ Ս. Երեմյանն իր անհետևողականության մեջ ավելի հեռուն է գնում՝ ասելով, թե այդ ստեղծագործության «մյուզիկը հռչակավոր Ռոսինին գրած է»¹³: Առանց մանրամասնությունների քննության մեջ մտնելու՝ նկատենք, որ դրանից մեկ տարի առաջ «Արշակ Բ» օպերան արդեն գրված և հայտնի էր պոլսահայ արվեստասեր հասարակությանը: Բնականաբար, Թերզյանի երկն էլ գրվել է 1868 թ. առաջ: Այն էլ պետք է ասել, որ չորս գործողությունից բաղկացած նրա թատերանվագը ձոնված է ոչ թե Ռոսինինին, այլ Թուրքիայի արքունական ճարտարապետ Հակոբ պեյ Պալյանին: Ահա հեղինակի շափածո ուղերձը.

Ի Պիմպլյան հովտին
Քորք ինունք ի հույլ՝
Դափնեհյուս ոլորս՝
Փունջըս գեղանշույլ
Ածյալ բերին
Յափոնս Պոսփորին:

Եվ նըվագաձայնք
Յայերս աստղազարդ
Յունկն անդ վեհազին
Կրկնեին զըվարթ.
«Ո՛վ մեծ՝ զայս բեզ ձոն
Հըզե Ապուլոն»:

Ու անդեն համախումբք
Յադամանդյա տառ
Դրոշմեին անշինջ
Փառաց ի տաճար.
«Քեզ անմահություն՝
Հակոբ վեհազուն»¹⁴:

Հակոբ պեյ Պալյանին է նվիրված նաև Տ. Չուխաճյանի օպերայի սիմֆոնիկ նախերգանքը: «Նույն նախերգանքը,— գրում է Ն. Ալիքսանյանը,— ձոնված ըլլալով գեղարվեստասեր ճարտարապետին, այս վերջինը շուշանար օժանդակելու

⁹ Գ. Ս տ ե փ ա ն յ ա ն, Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության, հ. 1, Երևան, 1962, էջ 384:

¹⁰ ՀՄՄՀ ԳԱ «Երարեր հասարակական գիտությունների», 1972, № 8, էջ 12—23:

¹¹ Գ. Ս տ ե փ ա ն յ ա ն, Հոդվածներ և հուշեր, էջ 167:

¹² Տե՛ս Ա. Ա լ պ ո յ ա ճ յ ա ն, Թովմաս Թերզյան («Բյուզանդիոն», 1909, № 3764), մ. Դ ա վ թ յ ա ն, Պատմություն հայ թատրոնի (Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Ս. Դավթյանի ֆոնդ, 1—I (1), էջ 128), Հ. Օ շ ա կ ա ն, Համազատկեր արևմտահայ գրականության, հ. 3, Երուսաղեմ, 1954, էջ 20 և այլն:

¹³ Ս. Երեմյան, Գրագետ հայեր, III շարք, Վենետիկ, 1913, էջ 620:

¹⁴ Թ ո Վ մ ա ս Թ եր զ յ ա ն, նշվ. աշխ., «Առ վսեմաշուք Պալյան Հակոբ պեյ»:

փոքր նվագախումբի մը կազմութեան գործին. բաց աստի, ան կը խնդրե հեղինակեն՝ աշակերտներու դասերը թողուլ, բոլորովին նվիրվելու համար օբերային, խոստանալով անպայման ներկայացնել զայն»¹⁵. Վերհիշելով 1865—1870 թթ. Օրթագյուղում վերածնված հայ թատերական շարժումը, Թ. Թերզյանը Կ. Պոլսի գրական սալոններից մեկում ոգևորված պատմում է այն մասին, թե ինչպես են իր միջնորդութեամբ Հակոբ և Բեմրե Պալյան ամուսինները օսմանյան հարյուր ոսկի (այն ժամանակվա համար մեծ կարողութուն) նվիրաբերել Միլանից վերադարձած և իր երաժշտական գործունեության առաջին շրջանում կարիքի մեջ ընկած Տիգրան Չուխաճյանին¹⁶. Ահա թե ինչու է հայ առաջին դասական մեծ օպերան նվիրված Հակոբ պեյ Պալյանին: Արևմտահայ արվեստագետներից շատերին հովանավորած այդ բարերար մեկենասի ծովեզրոյա բնակարանում էլ, թերևս, ծնվել է ազգային օպերա ստեղծելու գաղափարը: Թերզյանի մի վկայութունը ևս հաստատում է, որ «Արշակ Բ» օպերան այլ տեղ ստեղծվել չէր կարող, եթե ոչ Կոստանդնուպոլսում: «Գալով խաղիս ընդհանուր հյուսվածքին, — գրում է նա իր երկի առաջաբանում, — բանասիրաց ծանոթ է թե որքան տաժանելի է երգի տոնվելու թատերգութուն մը գրելը: Նվագահանին քմաց և արհեստին համեմատ՝ ամեն օր խաղին այս կամ այն մասը հոշոտելու՝ այլափոխելու՝ ավելցնելու կամ հապավելու է»¹⁷: Ուրեմն՝ Թերզյանն իր լիբրետոն գրելիս ստիպված է եղել հաշվի նստել կոմպոզիտորի ցանկութունների, դիտողութունների ու պահանջների հետ, այն էլ, ինչպես դժկամորեն բողբում է նա, ամեն օր փոփոխութուններ մտցնելով իր գրվածքի մեջ: Այլ կերպ ասած՝ «Արշակ Բ» օպերան ստեղծվել է կոմպոզիտորի և լիբրետիստի սերտ համագործակցությամբ: Իսկ նման համագործակցութուն, ինքնին հասկանալի է, հնարավոր էր երկուսի միաժամանակ միևնույն տեղում, գոնե նույն քաղաքում գտնվելու դեպքում: Տիգրան Չուխաճյանը Միլանից վերադարձել է 1864 թ., իսկ 1868-ին օպերան արդեն պատրաստ է եղել, ամբողջությամբ՝ կամ հատվածաբար բեմադրվել նաուսի իտալական թատրոնում, հետևաբար՝ այն գրվել է 1864—1868 թվականներին, Կոստանդնուպոլսում, թեև մտահղացումն ավելի վաղ է եղել: Ապացո՞ւյց. Միլանից Չուխաճյանի բերած նախերգանքը: Նվ որովհետև 1868 թ.-ին է Տիգրան Չուխաճյանն ավարտել իր անդրանիկ օպերան, հենց այդ թվականն էլ պետք է համարել հայ երաժշտական թատրոնի հիմնադրման տարեթիվը:

ГДЕ И КОГДА ПИСАЛАСЬ ОПЕРА «АРШАК ВТОРОЙ»?

САМВЕЛ ИСКАНДАРЯН

Резюме

В армянском музыковедении бытует мнение, что опера «Аршак Второй» была написана Т. Чухаджяном в Константинополе, в 1868 г. Искусствовед-филолог Г. Степанян датирует ее 1863 г., считая, что она была создана в Милане. Факты показывают, что опера «Аршак Второй» была написана в Константинополе в 1864—68 гг. И поскольку она была завершена в 1868 г., именно этот год следует считать временем основания армянского музыкального театра.

15. Թ ե ո գ ի կ, նշվ. աշխ., էջ 455:

16 Այդ մասին տե՛ս Ա ն ա յ ի ս, Հուշերս, Փարիզ, 1949, էջ 35—36:

17 Թ ո վ մ ա ս Թ եր զ յ ա ն, նշվ. աշխ., Ազդ: